

4.3.2. Ներքին զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների, 2014թ. հունվար-սեպտեմբերին հանրապետության տարածքում հյուրանոցային տնտեսության օբյեկտներում տեղաբաշխված զբոսաշրջիկների թվաքանակը կազմել 785 180 մարդ (ՀՀ ռեզիդենտներ)<sup>1</sup>, ինչը 2013թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ ավելացել է 33.7 %-ով:

Ներքին զբոսաշրջությունն ըստ նպատակի

մարդ

	2013թ. հունվար- սեպտեմբեր	Տեսակարար կշիռը, %	2014թ. հունվար- սեպտեմբեր	Տեսակարար կշիռը, %	Աճի տեմպը, %
<b>Ընդամենը զբոսաշրջիկներ<sup>2</sup></b>	<b>587 307</b>	<b>100.0</b>	<b>785 180</b>	<b>100.0</b>	<b>133.7</b>
որոնցից ըստ նպատակի՝					
գործնական	132 239	22.5	153 086	19.5	115.8
հանգստի և ժամանցի	352 284	60.0	507 698	64.7	144.1
բուժման	54 563	9.3	83 514	10.6	153.1
այլ	48 222	8.2	40 882	5.2	84.8

<sup>1</sup>Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՉՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010) **ներքին զբոսաշրջիկ** է համարվում ցանկացած անձը, որը ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրի երկրի սահմաններում (սովորական բնակության միջավայրից դուրս), այսինքն որևէ երկրի բնակիչների ճանապարհորդությունը իրենց ինկ երկրում կամ հիմնական բնակության երկրում, անկախ ճանապարհորդության նպատակից (բացի ուսման նպատակով) ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով և ճանապարհորդության գլխավոր նպատակը չի հանդիսանում գործունեությամբ զբաղվելը, որի համար վճարվում է այցելած վայրում:

<sup>2</sup> Տվյալներն արտացոլում են «Հյուրանոցային տնտեսության օբյեկտների մասին» ՀՀ օրենքով սահմանված հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (հյուրանոցներ, հյուրանոցատիպ հանգրվաններ, առողջարաններ, հանգստյան տներ և այլն) հաշվառված զբոսաշրջիկներին: